

ՀՆԶԱԿ

ԿՆԵՏՐՕՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՈՐԾԸ.

Մեր թշնամին ցնծութեան մէջ է: Իր իրաւունքն է այդ, եթէ ինքը կարծում է, որ իր ներկայ դրութեան ճիշդ արտայայտութիւնը ցնծութիւնն է: Հայ յեղափոխական գործունէութեան հարւածից ստացած իր բազմաթիւ վէրքերը նա հիմա ջանք է անում դարմանել: Այդ դարմանի համար նրան պալատանի տեղ ծառայեց Յունաստանի վրայ տարած թեթեւ յաղթութիւնը: Այժմ իր արիւնքամ մարմնում զգալով կենսատու հիւթից մի բարակ հոսանք, նրան թւում է, թէ իր գլխին կախած մահաբեր փառնգն այլ ևս չբացել է:

Մենք տարակոյս չունենք, որ նրա այդ ինքնապատահութիւնը կը լինի խիստ կարճատեւ: Թիւրքիան այժմ այն մերձ խնաց ընկածն է, ու հոգեւարքի միջոցին ունենում է վերականգնութեան խաբուսիկ զգացման րօպէներ: Վա այնպիսի ինքնախաբէութիւն է, որ բնութիւնը երբէք չէ ներում և հարւածում է մահով: Մոլորութեան այդ րօպէն կը ցնդէ: Համախաղաղականութիւնը չէ, որ կարող կը լինի փրկել սուլթանին և իր կառավարութիւնն ու թիւրքիայի ճակատագիրը: Անցան զնային այն ժամանակները, երբ այդպիսի ցնորքները դեռ ներելի էին: Այսօր այդ երազը մի երկրի միապետի գլխում, որը նոյն երազով սնուցանում է իր ժողովրդին, աւելի քան ծիծաղելի է: Վաղաքականութիւնն այդ խաղերով չէ կարող խաբւել: Անյայտնի է, որ այդ երազը կուրծքեան էլ արգիւնք չէ, այլ սուլթանի անձնական դիտումների ու շահերի թելադրութիւն՝ փրկելու համար իր սեփական գոյութիւնն ու դիրքը:

Սակայն որքան կարճ ժամանակի համար: Այդ է խնդիրը: Թիւրքիայի օրգանիզմն է, որ փտած է: Վրա կառավարական մեքենան մաշած է: Վրա նիւթական հիմքերը խախտւած են՝ կործանւելու պատրաստ: Այն, ինչ գատապարտւած է մահով, յարութիւն առնել չէ կարող: Ինքն էլ զգալով այդ, սուլթանական ընկերներ, իր գոյութեան պահպանման վերջին ծիգերում, գործ է դնում իր կամքի և իր ինքնապահպանութեան բնազդի ամբողջ գործութիւնը, ամբողջ ոյժերը, որ մնացել են դեռ իր մէջ, արտայայտելով նրանց պոլսական քծնող

խարդախութիւններով և ասիական վայրենի բռնութիւններով:

Հէնց այդ նպատակով է, որ համախաղաղականութեան դադարի ետեւից ընկած՝ սուլթանական ընկերներ ձգնում է նրանով քիչ աւելի երկար ժամանակ քարշ տալ իր վնասակար, ողորմելի ու անիծւած գոյութիւնը: Հայ յեղափոխական գործունէութեան հարւածների տակ նա վերջնականապէս կորցրեց թէ քաղաքական և թէ նիւթական յենակետերը: 1895 Վ. Պօլսի Հնչակեան Յօյցից յետոյ, հէնց կոտորածների ամենակատաղի միջոցին, եւրօպական տէրութիւններից ոմանք անպաշտօն կերպով առաջարկ դրին ձեռքբերու Վարդանէշը և Աբդուլ-Համիտին ձերբակալելու իր պալատում: Սուլթանն ու իր ընկերներ, հայ յեղափոխական գործունէութեան շնորհով, հասած էին այդ վիճակին, որից նրան փրկեցին Աբդուլ-Վահիդ-Կի խարդախութիւնը և զխառնաբար եւրօպական մէկ-երկու միապետներ:

Երբ առաջ եկան կրէտական ապստամբութիւնը և Յունաստանի խլրտումները, սուլթանական ընկերներ, թւում էր, այլ ևս ստանալու էր վերջնական մահացու հարւածը: Բայց, դաւաճանւած եւրօպական տէրութիւնների կողմից, Յունաստանը յաղթւեցաւ: Այլ ևս անոյժ քաղաքականապէս և օսմանեան երկիրը պատերազմի չընորհով նիւթապէս աւելի ևս քայքայւելով, թէսալիայի աւերակների տակից յանկարծ դուրս ցրեցւեցաւ Համախաղաղականութեան կանաչ դրօշակը, իբրև խարխուս սուլթանական փրկութեան:

Վաղմաճ իբր թէ բոլորովին հակառակ նրա պատակով, եւրօպական մեծ տէրութիւնների համախաղաղութիւնը դարձաւ համաձայնութիւն՝ Թիւրքիայի և սուլթանական ընկերների պահպանման: Ապա դրա հետ միացած բռնութեան, յետադիմութեան, եւրօպական կապիտալիստների շահախնդրութեան, հակաազատութեան ամեն նսեմ ոյժերը՝ կանգնեցան ազատման վտանգի դէմ այն բոլոր փոքրիկ ազգերի, որոնք իրանց հետ բերում են հնացած Թիւրքիայի անկման գոյժը: Այդ բաւական չէ. նրանք իրանց ազատման հետ բերում են նաև մէկ ուրիշ բան, որ շատ աւելի մօտից է խոցում Աւրօպայի սիրտը: Վրանք իրանց ազատումով կը լինեն պատճառ եւրօպական պետու-

Թիւնների քաղաքական ու նիւթական շահերի և զրանց կապիտալիստների շահագործութիւնների կրճատման ու նուազեցման Արևելքում, փոխանցնելով այդ ոյժն իրանց, քաղաքականապէս նոր ծագող փոքրիկ ազգերի, ձեռքը:

Յետադիմութեան, բէակցիայի, բռնութեան ու եւրօպական կապիտալիզմի խաւար ոյժերն են, որ, բնական կերպով ներքնապէս զաղտնի դաշինք կապած իրարու մէջ և սուլութանական բէժիմի հետ, այսօր եկել կտրել են Արևելքի ազատման ծանապարհը: Ամբողջ Փոքր Ասիայի պէս հրաշալի մի երկիր Աբգիւլ-Համիտի ձեռքի աւերման ասկ թողնելուց յետոյ, ամբողջ ժողովուրդների արեան հեղեղները թափել տալու և հարիւր հազար դիակների վրայ միլիօնաւոր հողի էլ ամենաթըշւառ, սնանկ, ցիր-ցան, քայքայւած վիճակի ենթարկելու մեծ ոճիրն անպատիժ թողնելուց յետոյ, այսօր եւրօպական տէրութիւններն, իրանց կապիտալիստների միջոցով, հաստատուում են Արևելքում, իբրեւ սրա տէրեր՝ դաշնակցութեամբ Մեծ Մարդասպանի, չը զգալով իրանց խղճի վրայ իրանց պատմական ամօթի տիղմը: Աւրօպան այսօր դարձել է Թիւրքիայի խնամակալը և տէրը: Վաղաքականապէս ու անտեսապէս Թիւրքիան այլ ևս մի ստորադրւած տէրութիւն է: Թիւրքիան Աւրօպայի հոմանիւն է:

Աւրօպական քաղաքականութեան ներկայ գազանաբարոյ, ընչաբաղց ու խարդախ ժամանակներին, երբ մեր դիմաց ունենք մի թշուառացած ժողովուրդ, թերահաւատ, անստոյգ, զգուշաւոր ու լքւած՝ իր տրամադրութեամբ, թէև դեռ բնաւ չը յուսահատւած իր ապագայից, հայ ճշմարիտ յեղափոխականի գործը խիստ դժւարին է, մինչդեռ այդ գործի առաջ մղումն անպայման կերպով անհրաժեշտ: Յանցաւոր են, նաև տխմար, նրանք որոնք, շահագործելով յօգուտ իրանց անձնակաւնի հայ ժողովուրդի ներկայ վարանոտ տրամադրութիւնը, ձգնում են նրան զրգուել անկեղծ յեղափոխականների դէմ և այս վերջիններին դարձնել նշանատեղի թունաւորւած սլաքների համար: Յանցաւոր են, նաև տխմար, նրանք էլ, որոնք իրանց յեղափոխական կարծելով, ծածկում են ժողովուրդի աչքից յեղափոխական գործի այսուհետև ունենալիք ամեն դժւարութիւնները և ձգտում յեղափոխական նախկին, այլ ևս իրանց շրջանն աւարտած, ամեն միջոցներով գործել, անցած, այլ ևս յետ մնացած, ուղիով անցնել, այլ ևս ժանգոտած զէնքերը գործածել:

Յոյսի, մտքի և կռիւի խօսքը, որը շարունակ պատրաստում է ազատման գործը, որպէս և դրա հետ միասին յեղափոխական կազմակերպական աշխատութիւնը՝ պէտք է անպայման նպատակ ու-

նենան ոչ թէ խեղքերը զրգուելու և մանր ձեռնարկներ առաջ մղելու ու արագաբար զորելու, այլ հմուտ կերպով գծագրելու յետագայ գործունէութեան խնդիրներն ու ուղղութիւնը, խորը և աւելի ընդարձակ հիմունքների վրայ կառուցանելու մէկ ընդհանուր մարտական կազմակերպութիւն և տալու յեղափոխական բոլոր ընդունակ ու անկեղծ ոյժերին գործունէութեան մէկ և ընդհանուր յատակադիժ: Ղա մէկ օրւայ գործ է, հարկաւ, բայց և նպատակն էլ մէկ օրւայ աջողութեան համար է: Այսուհետև մեր մղելիք կռիւը, իր անխուսափելի ելեկշնորով հանդերձ, պէտք է, վերջին հաշւով, մեր ջանքերն անպայման կերպով պսակէ վերջնական յաղթանակով: Որովհետև այսուհետ վերջնական յաղթանակի համար է, որ մենք պէտք է մղենք մեր կռիւը: Աւ ի՞նչ եղանակի պէտք է լինի այդ կռիւը: Այն, ինչ որ մինչև հիմա, այլ և այլ ժամանակներ, տեղի ունեցաւ մասնակի կերպով միայն, առաւել կամ նւազ աջողութեամբ: Հիմնական կերպով, զաղտնի անելով բոլոր անհրաժեշտ նախապատրաստութիւնները, որոնք բազմաթիւ ու դժւարալուծ են, ընդհանուր ապստամբական բացարձակ պատերազմըն է, որ կարող է լուծել խնդիրը: Հսկայական աշխատութիւն է պէտք այդ նպատակին հասնելու համար: Կռիւը սակայն պէտք է լինի վճռական: Ղրանից է կախւած փրկութիւնը:

Այդ հսկայական գործն առաջ տանելու համար՝ անհրաժեշտ է, որ յոյսի, մտքի և կռիւի խօսքը զինւած լինի զաղափարական լուրջ զօրութեամբ և հմուտ կերպով կարողանայ քննել ու լուսաբանել քաղաքական ու ազգային հանգամանքներն ու զրութիւնները, որոնց համեմատ էլ որոշել կռիւի միջոցները, ընթացքը, նրա ասպարէզը, նրա պայթման ըռպէն և այլն: Այդ խօսքը, որի կոչումն է պատրաստել ազատման գործը, պէտք է նաև յեղափոխական ամբիօնի բարձրութեան հասած լինի, այնտեղից կարողանայ բարի ազդեցութիւն ունենալ ժողովուրդի վրայ, հաւատ ներշնչել նրա թերահաւատ սրտում դէպի փրկութեան գործը, տիրապետել նրա բնազդների ու կրքերի վրայ, լուսաւորել նրա միտքը՝ պարզելով խնդիրները, ուղղութիւն տալ նրա հայրենասիրական զգացման, նրա գործելու փափագին, նրա ընդունակութեան, նրա գործունէութեան, ներշնչել նրանում տոկունութեան զգացումը՝ երբ հարկ է սպասողական դիրք ունենալ և որոշելով կռիւի ժամը՝ ընդունակ լինել տալու նրան ոյժ ու եռանդ այդ կռիւի համար:

Խօսքի ու կազմակերպական այդ աշխատութիւններն են, ընդհանուր խօսքով, որ որոշում են հայ յեղափոխականի բռնելիք ընթացքը գա-

լիք վերջին մեծ ճակատամարտը յաղթանակով պսակելու համար: Դուրջ մտածողութեան ու քրն-նութեան առարկայ դարձնենք այդ խնդիրները, միշտ աչքի առջև ունենալով այն ճշմարտութիւնը, որ եթէ շատ անգամ յեղափոխականների ջանքերից անկախ պատճառներով են առաջանում անաջո-ղութիւններ, աջողութիւններն էլ շատ անգամ նոյն ջանքերի հետևանքն են ու պսակ:

ԹՂԹԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

22 Մայիս 97.

Ղերջին օրերս թիւրք կառավարութիւնը սկսած է փոփոխել իր կառավարելու եղանակը: Կեդրոնական կա-ռավարութեան կողմէ արուած խիստ հրահանգներու համաձայն, տեղական պաշտօնեաները մի աստիճանի լաւ վերաբերութիւն ունեն դէպի քրիստոնեայ տարրը և մանաւանդ դէպի Կիլիկիցի հայերս: Ամեն ջանք կը գործադրուի թէ քաղաքի և թէ գիւղերու մէջ ապա-հովութիւնը և հանգարտութիւնը պահպանել, նորանոր կողոպտանքներու, խռովութիւններու, քաղաքներու ընթացքը կասեցնել և հարկահաւաքութիւնը համեմա-տաբար աւելի մեղմութեամբ կատարել:

Թիւրք կառավարութիւնը խիստ զգոյշ և ճարպիկ կերպով առաջ կը տանէ այս ամենը, բարենորոգու-թեան պատրուակի տակ, միմիայն հայ ժողովուրդը չը գրգռելու և նորանոր յուզումներու ու դէպքերու տե-ղե չը տալու համար: Թիւրք կառավարութիւնը աջո-ղակութեամբ իւրացուցած է եւրոպական զգուշիկ Պե-տութիւններու նենգաւոր և խաբեբայ յատկութիւննե-րը: Այժմ, ի հարկէ, քաղաքական ներկայ ճգնաժամի հանդէպ նա ամեն միջոց ի գործ պէտք է դնէ ժողո-վրդի մէջ անբաւականութիւն և տրտունջ չառաջա-ցնելու. իսկ երբ կը տանէ նոյն օրհասական րօպէ-ները, այդ ժամանակ, դարձեալ, նա գիտէ իր քաղա-քականութիւնը, իր հաշիւը և իր վերաբերութեան կերպերը:

Անցեալ օրեր Գուլլուճը կոչուած թրքաբը-նակ գիւղի մէկ երկու թիւրքեր իրար սպաննած էին: Նոյն օրեր Էրզինի մէջ մի յայտնի շէյխ սպաննուած էր և Զայլի մէջ ալ մէկ ուրիշը վիրաւորուած: Ան-տարակոյս, եթէ կառավարութիւնը իր առաջ չունե-նար քաղաքական ներկայ նկատումները, առանց իսկա-կան յանցաւորները փնտռելու, առանց ստուգելու, այ-ժմ, ձերբակալած պիտի լինէր բազմաթիւ անմեղ հա-յեր, որոնք, որպէս ամենածանր ոճրագործներ, պիտի գրուէին բանտերու մէջ և ենթարկուէին անլուր տան-ջանքներու:

Թէ միւսիւրման և թէ քրիստոնեայ ժողովուրդնե-րը ուշադրութեամբ կը հետեւեն Յունա-թրքական պա-տերազմին և անոր հետեւանքներուն:

Պատերազմը սկսելէ ի վեր կառավարութիւնը, ա-մեն օր, յայտարարութիւններ կը փակցնէր շուկաներու մէջ, կառավարական շէնքերու պատերու վրայ՝ պատե-րազմի առօրեայ արգիւնքի նկատմամբ: Ամեն օր նորա-նոր յաղթանակներ կը տանէր յունական բանակի վը-րայ. օր չէր լիներ, որ մի քանի հազար յունական զօրքեր կոտորուած չը լինէին կամ 5-10 թնդանթ գրաւուած:

Ամեն օր քաղաքներ կը գրաւէին, կայրէին, բնա-կիւնները սրով կանցնէին... Սուլթանական պաշխոստութեան նախաձեռնող սոյն վերջին քաղաքագործութիւն-ները մասնաւոր շեշտումներով կը հաղորդուէին հա-սարակութեան՝ թիւրք խուժանին յուսադրելու, իսկ հայերուն, ընդհակառակը, երկիւղ և սարսափ ներգոր-ծելու նպատակով: Սակայն զարմանալին այն էր, որ թիւրք ժողովուրդի մեծամասնութիւնը, նոյն իսկ կառա-վարական պաշտօնեաներէ շատեր, ոչինչ չէին հաւատ-ընծայէր սուլթանական սոյն իլաննամէն երուս: Այն օր, երբ տարօրինակ, անհաւատալի յաղթութիւններ չա-փաղանցուէին՝ թիւրք ժողովուրդը կ'ասէր՝ «այսօր ան-պատճառ մեր բանակի մէջ բազմաթիւ զինւորներ կոտոր-ուեցան և մեծամեծ ֆեաւներու ենթարկուեցաւ մեր բա-նակը ևն»:

Սի քանի օրէ ի վեր յայտարարութիւններ տրուե-լը դադրեցաւ և միանգամայն արգիւնցաւ, թէ քրիս-տոնեաներու և թէ միւսիւրմաններու համար. քաղա-քական անցուդարձերու մասին խօսել և «Յոյն», «պա-տերազմ» բառերը արտասանել: Սուլթանական սոյն տարօրինակ և քեանքին հրամաններու և կամ փոփո-խութիւններու պատճառներու մասին ոչինչ չը գիտենք, միայն իրականութիւնը այն է, որ ամբողջ թիւրքիայի մէջ գոյութիւն ունի այժմ մէկ այնպիսի ըէփմ, դը-րութիւն, որ ժողովուրդներու բոլոր դասակարգերն, ա-ռանց բացառութեան, պարտաւորուած են լսել, խօ-սակցել, հաւատալ քաղաքական անցուդարձերու մասին այնպէս, ինչպէս իրեն՝ սուլթանի քէյմն է և ինչպէս նա կը հրամայէ, թէկուզ այդ լուրերու երկրորդը իր նախորդի բացարձակ հակասութիւնը լինի: Սոյնօրինակ մի դրութիւն հետզհետէ սովորական կը դառնայ և կը ծանրանայ ժողովուրդի ազատ կարծիքի վրայ, այն աստի-ճանի, որ նոյն իսկ այդպիսի մի ներքին քաղաքակա-նութեան կողմնակից բազմաթիւ թիւրքեր սկսած են վերջերս անբաւական լինել և տրտունջներ յարուցա-նել սուլթանի կառավարութեան դէմ:

Կեդրոնական կառավարութեան հրահանգի համա-ձայն այս տարի խիստ անշուք կերպով անցաւ մահմե-տականութեան ամենամեծ տօնը՝ Ղուրպան Պայրա-մը: Պայրամէ մէկ օր առաջ տեղական կառավարութիւն-ներու կողմէ մունետիկները յայտարարեցին թէ՛ այս տարի, պայրամի առթով, կարգիլուի ամենքի համար հրադէններ պայթեցնել կամ խմբովին ցոյցեր ընել... անհնազանդները պէտք է պատժուին ծանր կերպով: Եւ, իսկապէս, ոչ Պայրամի սովորական թնդանթները արձակուեցան և ոչ ալ հրացաններ պայթեցան: Ոս-տիկաններ և զինւորներ խմբով կը պտտէին շուկա-ներն ու փողոցները գործադրելու համար սուլթանի սոյն նորօրինակ հրամանն ալ: Գտնուեցան մի քանի մուրաբաթ թիւրք երիտասարդներ, որոնք ուղեւոր իրենց կրօնի աւանդական սովորութիւնը պահել՝ հրացաններ պարպեցին. այդպիսիները, իբրեւ թէ պէտք է պատժուին:

Պատերազմի տաք ժամանակները թիւրք կառավա-րութիւնը ահ ու դողի մէջ էր, այն պատճառով, թէ մի գուցէ, նաև հայերի կողմէ նորանոր խնդիրներ և յուզումներ կը յարուցուէին: Ամեն ճիգ կը թափուէր, ամեն սուլթանական հնարքներ ու միջոցներ ի գործ կը դրուէին այդպիսի պատահականութիւններու առաջքն առնելու համար: Անպարանքով ընտրեցներու նորա-նոր վաշտեր կազմուելով, որպէս և մնայուն զինւորնե-րու մի մասը, ուղարկուեցան դէպի նաւահանգիստները,

իհասարակ, գէպի պատերազմի վայրերը փութացնելու համար: Մնայուն զինւորները կուղարկուին գիշերանց, հասարակութենէն բոլորովին դադարի կերպով: Զինւորներու պակասումը հայերուս չը հասկացնելու համար, իւրաքանչիւր օր, երբեմն օրը մի քանի անգամ, հակառակ նախկին սովորութեան, մնացորդ քիչ զինւորները հրապարակ կը հանէին և վարժութիւններ կընէին, անշուշտ, հաւատացնելու համար թէ, զինւորներու թիւը նուազած չէ և վարժութիւն կատարող խմբերը տարբեր տարբեր գնդեր են:

Ատանայի կուսակալութեան մէջ գտնուող բերդերը, ինչպէս Թօփրադ-Գալէ, Եիլան-Գալէ, Անարզաբայ ևն. մասնաւոր հրահանգի համաձայն, վերջերս կը վերանորոգուին և ամրութիւններ կը հաստատուին: Հասարակութիւնը անձանթ է սոյն նախապատրաստութիւններու պատճառներու մասին: Սոյն բերդերը ունին անառիկ դիրքեր, սակայն Կիլիկիական հարստութեան անկումէ բաւական ժամանակ յետոյ հրդեհուած, քանդուած և ամայացած են. իսկ այժմ, երկար դարերէ ի վեր անխնամ թողուած լինելով, շարունակական անձրևի և ձիւնի են. ի շնորհով, կը ներկայացնեն միմիայն փառաւոր աւերակներ, որոնց վերաշինութիւնը կը կարօտի մեծամեծ դրամական ծախսերու և այսուհանդերձ ռազմագիտական անսակէտով ալ ոչ մի կարևորութիւն չեն ընծայեր:

Ատանայի վալին այցելութեան ելած էր իր շրջանակի մէջ գտնուած գաւառները: Տեղացի աղաները տեսութիւն ունեցան և միաժամանակ բողբոջեցին տեղական կառավարութեան անիրաւութիւններու և բարբարոս խուժանի հասուցած բազմատեսակ չարիքներու և աղէտներու մասին: Վալին, սուլթանի պաշտօնակալ կառավարութեան այդ լիտի պաշտօնեան, նոյն պատասխանները կրկնեց, ինչ, իրմէ առաջ՝ իր փոխանորդը և, աւելի առաջ, մասնաւորապէս ուղարկուած քննիչ պաշտօնեաները ասացեր էին, այն է, թէ «մինչև այժմ տեղի ունեցածները պէտք է մոռանաք... այսուհետև հանգիստ եղէք... հաւատարիմ և հնազանդ եղէք սուլթանին և իր բարձր հրամաններուն... Նա ներողամիտ է և պիտի գթայ ձեր վրայ, հանգիստ և հպատակ մնացէք ևն.» Մինչդեռ իրենց բողբոջներու կամ պահանջներու մասին՝ ոչ մի պատասխան, ոչ մի ուշադրութիւն... Եւ արդէն ինչ կարելի է սպասել: Սուլթանի այդ արժանաւոր պաշտօնեան, ի միջի այլոց նաև ցաւ կը յայտնէր այն պատճառով, թէ հայերս կընդունենք այն նիւթական և այլ նպաստները, որոնք կը բաշխուին անգլիական հիւպատոսի միջոցով: Վալին կը կրկնէր, թէ՛ ամօթ չէ՞ ձեզ, որ օտարներու ցրուած իշտանէն կընդունէք. երբեք չէք խորհիր, թէ այդ իհասակները ստանալով օտարներու կողմէ, դուք անպատուած կը լինէք մեր վեհափառ և ողորմած կայսեր... Աղերսագրեր կը գրէք և կը դիմէք օտար տերութիւններու ներկայացուցիչներուն, ինչ շահ ունեցաք... խելքերնիդ գլուխնիդ հաւաքեցէք... ինչ կը յուսաք անոնցմէ...»

Ահա այսպէս ժողովուրդին կենթարկեն վերին աստիճանի չքաւորութեան, կը հարստահարեն, կը կեղեքեն, և սովամահ չը լինելու համար հասած նպաստներն ալ չեն կամենար, որ բաշխուեն, իսկ բաշխուելէ յետոյ չենց առաջինները իրենք, այդ անբարոյական և լիբբ պաշտօնեաներն են, որ բռնութեամբ և կամ զանազան միջոցներով կը խլեն, կը կոր-

ղեն մեզ հասած օգնութիւնները: Կը ծեծեն. կը նախատեն, կը վիրաւորեն, կը սպաննեն և թոյլ չեն տար, որպէսզի մեր ցաւերը, մեր դարտերը լանք ուրիշներուն: Եւ սակայն յիշաւի, միթէ ճշմարիտ չէ՞ կուսակալի այն խօսքերը թէ՛ «ինչ շահ կարող էք ունենալ օտարներէն, անոնց ձեր ցաւերը լալէ... խելքերնիդ գլուխնիդ...» Ինչքան գաղանաբարոյ, ճիւղ, հրէշ և սուլթանը, նոյնքան ոչ պակաս չէ՞ նաև շահամոլ և անամօթ Եւրոպան...

Պոխանակ լաց լինելու աւելի նախամեծար չէ՞ վրձնել միանգամ ընդմիշտ — ապրել ազատ և կամ մեռնել հերոսի պէս:

ՄԱՍՏԱՌՑԻ.

ՆԱՄԱԿԱՆ ՆՏՈՒՆՈՒԹՅՈՒՆ.

10 Յունիս 1897.

Հալէպի վիլայէթի մէջ մահմետական հասարակութեան սարսափը մեծ էր, երբ Յունական պատերազմը յայտարարուեցաւ: Թիւրք խուժանը և, մասնաւորապէս, Մուհամմետի կրօնը պաշտպանող մուլաները, իմամները, իւլէմաները բողբոջեցին յուսոյատուած էին, թէ գուցէ վերջ պիտի գտնէ իրենց խալիֆայի տիրապետութիւնը և իրենց երկիրը անցնի անհաւատներու ձեռքը: Թիւրք պաշտօնեաներէ և իւլէմաներէ ոմանք այս ամեն չարիքներու բացարձակ պատճառ կը համարէին իրենց խալիֆան՝ Սուլթան Համիտը, որը, իր անխոհեմ քաղաքականութեամբ, անընդունակ ու վնասակար ընթացքով, ամբողջ երկիրը աւերակների փոխադրեց և ժողովուրդները առաջնորդեց գէպի ծայրայեղ թշուառութիւն, գէպի անդառնալի կորստի խոր անդունդը: Իսկ ոմանք խալիֆութեան մարգարէներէն՝ կը կրկնէին, թէ իրենց օրերը հաշուած են և թէ իրենց թաւականը պէտք է վերջ գտնէ: Կրէտական յաղթական ապստամբութիւնը և յետոյ պատերազմը ինչ ոյժով արձագանք կը տային Հալէպի նահանգի մէջ, նոյնքան տրտուծն ու յուզումները կը մեծանային, կը տարածուէին ժողովուրդական խաւերի մէջ՝ ընդգէմ սուլթանի և իր կառավարութեան:

Նահանգի ամեն կողմերէ արագ-արագ կազմուելով ընդհանրութեամբ բազմաթիւ վաշտեր՝ կուղարկուէին նաւահանգիստները, ուրկէ մակեդոնական սահմանագլուխը: Արաբ ցեղերէ շատեր մերժեցին զինուոր տալը և հետզհետէ, որպէս և ֆրլահներն ու այլ մանր ցեղերը, ստացան սպանական բնուորութիւն: Ճամբուած զինւորներու դրութիւնը խիստ ողորմելի էր. վաշտերէ շատեր չունէին զինւորական զգեստ, այլ միայն իրենց հասարակ գեղջկական հագուստները կը կրէին: Գարնան անձրևոտ օրերու մէջ այդ թշուառ արաբները պարտաւորուած էին երկար ճանապարհորդութիւն անել բոպիկ ոտքով կամ ծակծկած կոշիկներով և, առհասարակ, ամենաշնչին սնունդով:

Մինչև այս թաւականը կառավարութիւնը հաւատարիմ մնացած իր ուղղութեան, ամեն տեսակ բռնութիւն, զեղծումներ, հարստահարութիւն կը գործադրէր քրիստոնեայ ազգերուն և, մասնաւորապէս, հայերուն: Թէ Անտիոքի և թէ շրջակայ հայ գիւղերու մէջ խեղճութիւնը կատարեալ էր: Չը նայած ժողովուրդի տընտեսական այսպիսի քայքայման՝ այսուհանդերձ սուլթանի աւազակային կառավարութիւնը երկիրը կենթար-

կէր կատարեալ պատերազմական վիճակի: Մերանէն սկսած մինչև Սելեկիա, մինչև Ղաթաբիա, ծովեզերքի վրայ հաստատուած են զուլաններ և պահապան զինուորներ, նմանապէս գաւառներու խորերը երթեկեկութեան կարեւոր կէտերու վրայ: Սելեկիան, Քէսապը, Բէլանը կը գտնուէին զինուորական խիստ հսկողութեան ներքեւ: Հայ գիւղացիները անկարող էին աղատ յարաբերութիւն ունենալ շրջականների հետ՝ իրենց կենսական անհրաժեշտ պէտքերը հոգալու համար:

Անտիոքի կառավարութիւնը իրեն գործիք ունենալով յայտնի լրտես Մարտիրոս Էֆէնտի կոչուած անձը, որը միանգամայն իտարէի անդամ է, ջանաց վերստին ձերբակալել Սուէտիայի և Քէսապի շրջակայ ժողովուրդէն շատեր, որոնք հազիւ ազատ էին թողուած սուլթանական վերջին ներողութեան ժամանակ: Կառավարութիւնը ամեն աշխատանք ի գործ դրաւ խստութիւններ սաստկացնել, յայտնի հայ անձնաւորութիւններ հալածել և հաւատարմութեան ու երախտագիտական խնդրագրեր ստորագրել տալով ուղարկել Պօլիս՝ կեդրոնական կառավարութեան: Այսպիսի ազգամիջան գործերու մէջ ոչ-պակաս վատ դեր կունենան երբեմն դիմակաւոր դաւաճաններ, որոնց անունները առ այժմ հրապարակել չենք ուղեր: Այդպիսի վատեր ընդմիշտ արհամարհուած են դէպի իր աղատութիւնը ընթացող ժողովուրդի կողմէ և ուշ-կանուխ այդ ազգային կեղծաւորները, դաւաճանները պիտի ստանան իրենց արժանի պատիժը... Կառավարութեան սոյն խստութիւնները հայերուն մէջ պատճառեցին նորանոր դժգոհութիւններ և յուզումներ: Եւրոպական հիւպատոսներուն և Կ. Պօլսոյ գեսպաններուն բազմաթիւ բողոքագրեր ուղարկուեցան շեշտելով՝ կառավարութեան սոյն բացարձակ քաղաքականութիւնը հայերը կեղեքելու մասնաւոր դիտումով:

Յունական պատերազմի սկզբնաւորութենէն յետոյ թիւրք կառավարութիւնը իր նախկին ընթացքը փոխեց, խստութիւնները հետզհետէ կը պակսէին՝ տեղի տալով մեղմ սակայն խորամանկ մի քաղաքականութեան: Այդ միջոցները սուլթանի յատուկ իրատեղով Հալէպէն ճանապարհ ընկաւ տեղւոյն նախկին հուգուգ րէիս Մուսթաֆա Նէտիմը: Սոյն պաշտօնեան այցելեց զանազան գաւառներ, յետոյ Անտիոք, Բէլան, Սուէտիա ևն: Այդ օրեր կառավարական պալատի մէջ սովորական դառավարութիւններ և այլ գործունէութիւն դադարած էին, զինուորական ու կառավարական ատենաներ փակուած՝ գիշեր ու ցերեկ գաղտնի խորհուրդներ անդի կունենային: Թէ քաղաքի և թէ գիւղերու մէջ այն պաշտօնեաները, միւտիւրները, մուխթարները պաշտօնանկ եղան և հեռացուեցան, որոնք դէպի հայերը թըշնամական յարաբերութիւն ունէին: Բոլոր բանտարկեալները ազատ թողուեցան և առ այժմ ճանապարհները համեմատաբար ապահով են:

Կառավարութեան այս ընթացքը մեղ հայերուն համար մի նորութիւն կամ բարեփոխութիւն չէր: Մեր առջև որոշ էր սուլթանական քայքայուած պետութեան անցուցած ճգնաժամը և այդ ողորմելի վիճակի շնորհով իր ձեռք առած ազուէսական միջոցներն ու համեմատաբար փափուկ վերաբերողութիւնը: Հայ ժողովուրդը լաւ կը ճանաչէ իր անգութ թշնամին. նա լաւ է ըմբռնած իր դրութիւնը, իր բազմակողմանի կենսական պահանջները, որոնք երբեք գործադրութիւն չեն ունեցած դեռ ևս: Սուլթանական ստախոսութիւններն

ու պատրանքներն, ինչպէս և հալածանքներն ու սարսախները, երբեք կարող չեն եղած և չը պիտի կարող լինեն բնաւ մեղ խաբել, վհատեցնել և կամ ընկճել...

ՀՐԴԵՀ

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՅ.

14 Յուլի 1897.

Արեւ.ք սուլթանն, իր ամբողջ թագաւորութեան միջոցին, այնպէս ամբարտաւան և գոռողացած չէ եղեր ինչպէս այս թիւրքա-յունական պատերազմէն ետքը: Արդէն երբեք ալ այնքան գոռողանալու իրաւունք նա չէ ունեցած ինչպէս այժմ: Այն դիւրին և արժանազին յաղթութիւնը որ նա կրցաւ տանել Յունաստանին դէմ, իրեն մեծ ծառայութիւններ տուաւ: Եւրոպական մի քանի մեծ պետութիւններ, թէև այդ իրենց շահերուն իսկապէս ձեռնտու չը լինի ալ, հարկ տեսան իրենց կողմէ դիւանագիտական և կամ նոյն իսկ ռազմական և պատերազմական օգնութիւններ տալ և նեցուկ ըլլալ սուլթանին՝ եւրոպական ուրիշ տէրութիւններու շահուց հակառակ գործած լինելու համար Արևելքին մէջ: Ծառայութիւնները որ ստացաւ սուլթանն իր յաղթութեամբը՝ քանի մը տեսակ են: Նախ՝ բարոյական: Պէտք է մայրաքաղաքս ըլլալ զգալու համար թէ որչափ բարձրացած է այսօր Համիտին անունը: Ցակաւին տարի մը առաջ այդ անունը նոյն իրենց միւսիւլմաններու աչքին խաւարած լուսնին կը նմանէր: Սուլթանը սևեռես կը նկատուէր ամենուն աչքին. եթէ ոչ որոշ հասկացողութեամբ, դէթ մութ բնազդութեամբ մը թիւրքերն առհասարակ երկիւղի մէջ էին թէ՛ իրենց կայսեր ըրած գործերը աղէկ հետեւանք մը չը պիտի ունենան Թիւրքիոյ համար: Այդ պատճառաւ Ապտիւլ-Համիտը կորուսած էր իր չունեցած ժողովրդականութիւնն ալ և իբրեւ խալիֆա՝ շատ կը քննադատուէր մասնաւորապէս կրօնականներու կողմէ: Այսօր այդ երկիւղը փոխուեցաւ և դարձաւ անիմանալի վստահութիւն մը որ ցոյց կուտան այժմ ամեն մահմետականները դէպի իրենց հնդկահաւի պէս ունեցած միապետը: Ամեն չարագործութիւնները և ջարդերը, որոնք որքան ալ յագեցում տուած ըլլային միւսիւլմաններու դէպի քրիստոնեաները ունեցած ատելութեանը և թիւրք ժողովուրդեան կողպուտի և աւարառութիւններու դարեւոր սովորութեան, այսուամենայնիւ, բեռնաւորուած խղճի մը և գողցուած ապրանքի մը նման, ցանկացած համը չունէին և իրենց հետեւանքներով վտանգաւոր կերեւէին թիւրքերուն համար: Այսօր սուլթանին այժմեան յաղթանակին շնորհիւ այդ չարագործութիւնները այլ ևս անցած են սրբագործութիւններու շարքը յաշտ մահմետականներու, և սուլթանն ալ, իբր այդ գործերու հեղինակը, կը նկատուի իբրեւ տուրք անձնաւորութիւն մը որ հանճարեղ կերպով կը կատարէ իր խալիֆայական պաշտօնը և Մարգարէի հաւատարիմ յաջորդ՝ կը շարունակէ անոր մեծ գործը Իսլամականութեան փառքին ու սուրբ կրօնին համար:

Սուլթանը սակայն բարոյապէս այդքան զօրանալով իր ժողովրդեան աչքին՝ նա բարոյապէս զօրացաւ նաև նոյն իսկ այն Եւրոպիոյ աչքին որը տարի մը առաջ յարձակումներով և քմիծաղկերով կը վերաբերուէր դէպի նա և առանց գործ մը ընելու անոր դէմ

սարսափներուն վերջ տալու համար՝ արհամարհական խօսք մը բաւ կը համարէր սուլթանը և անոր ամբողջ տէրութիւնը գողացնելու համար: Իսկ այսօր — ինչ հեգնութիւն. կայսրներն իրարու հետ կը մրցին ջերմեռանդաբար իրենց դարեկամութիւնը, յարգանքը և սէրը՝ արտայայտելու համար Մեծ Մարգարտանին, որը այսօր կատարելապէս կը վայելէ իր թագաւոր դարեկամներէն՝ ոչ պակաս կայսերական բարձր աստիճան մը:

Այժմ կարգ մը հայերու մէջ, մանաւանդ այստեղ Կ. Պոլսոյ մէջ և գլխաւորաբար մեր ջոջերու շրջաններուն և հիւրերու՝ երիտասարդութեան մէջ, սովորական դարձեր է հայհոյել հայ յեղափոխականներուն և ասոնց վրայ բարդել ազգային ամեն թշուառութիւնները: Այդ ապուշ կարծիքին դէմ ինձմէ աւելի աղէկ փաստաբաններ կան և ես չեմ ուզեր վիճաբանութեան մը մէջ մտնել, բայց պարտք կը համարիմ շեշտել այն հանգամանքին վրայ որ հայ յեղափոխական գործունէութիւնը տարեց տարի, ամիսէ ամիս ահագին հարուածներ կը հասցնէր սուլթանին վարչին գլխուն և անոր կառավարութեան անընդունակութիւնն և փտած ըլլալը երևան կը հանէր շարունակ, սուլթանի գահը փտանգելով: Այդ պատմական մեծ գործը ինչո՞ւ պիտի հայրութեան աչքէն վրիպի այս դառն ժամանակներուն մէջ: Ինչո՞ւ չը պիտի ընդունինք հայութեան զաւակաց այդ զարմանալի յաջողութիւնները իբրեւ մեր ազգային տաղանդին փառքը: Ինչո՞ւ պիտի աչք գոցենք այդ իրականութեան առջև: Թունա-թըրքական դժբաղդ պատերազմը յառաջ գալով և թիւրքիային առիթ տալով արժանագին բայց թիւրքիայի տարի մը առաջ ունեցած վիճակին բաղդատմամբ՝ նշանաւոր յաղթութիւն մը ընել և այդ եղանակաւ իր փտած ապրանքն իբրեւ աղէկ ապրանք ցուցնել, իր քանդուող տէրութիւնը՝ յաղթական ներկայացնել, — այդ առիթը յառաջ գալով, կըսեմ, և ծանօթ հետեանքները պատճառելով՝ հայկական խնդիրն իր եռուն վիճակին մէջ յանկարծ պաղեցուց և Եւրոպան ալ ուրախութեամբ աճապարեց մոռացման քողը սփռել այդ հիսաշունչ դիակին՝ վրայ: Եթէ այդօրինակ անակնկալներ չը պատահէին, անակնկալներ սակայն՝ որոնց հետեանքները այսօրուանին բոլորովին հակառակը կը սիրէինք յուսալ ամենքս ալ, անտարակոյս գովեստիւք պիտի փառաբանէինք մեր յեղափոխական ջանքերը, վասնզի կասկած չունիմ որ հայկական խնդիրն իր ներկայ տարտամ վիճակին մէջ չը պիտի գտնուէր: Եւ հիմա պիտի խոստովանինք որ իր աժան յաղթութիւնը Երեսններու դէմ՝ սուլթանի ոճրագործին մեծապէս ծառայեց նաև հայկական խնդիրը եթէ ոչ թաղելու գէթ առժամապէս մոռցնել տալու համար: Այդ ալ եղաւ սուլթանին երկրորդ մեծ վաստակը, թերևս ամենամեծ, որովհետեւ թիւրքիային ամենահիւանդոտ կողմը հայկական խնդիրն է և չը նայելով սուլթանի պատերազմական և դիւանագիտական յաղթանակներուն՝ այդ խնդիրը տակաւին խստապէս պիտի սպառնայ թիւրքիոյ օրհասական հարուածով մը:

Երրորդ շահը որ ունեցաւ սուլթանի կառավարութիւնն այս վերջին պատերազմէն, այդ ալ իր ֆինանսներուն կը վերաբերի: Թիւրքիոյ ֆինանսներ... Տարի մը առաջ այդ խօսքն ըսողին քիչն էին ի վար խընդալով կը մարէր ամեն ոք, իսկ այսօր ատիկա սուլթանը եւրոպական խնդիր մ' է ըրած և անակն լուրջ

ձեռով մը կը խօսի որ կը վախնաս խնդալ: Թող թէ այդ ձեռքերը թիւրքիոյ ֆինանսներուն, որովհետեւ ընդհանուր երկիրը և ժողովուրդը նիւթապէս վերջին ծայր անկման մէջ են, ինչպէս գրած եմ անցեալ նամակաւս, և խեղճ ԅունաստանէն խելիք չորս կամ հինգ կամ վեց միլիոն ոսկին չէ որ կառավարական ծախսնդունները լեցունէ: Սակայն այդպիսի յանդուգն և լուրջ ձեռով մը խօսին ալ սուլթանի կողմէ թիւրքիոյ ֆինանսներու մասին՝ ինքնին արդէն մեծ նշան մ' է: Արդէն զատ այժմ որոշապէս կը հաստատուի հետեւեալը: Մինչև վերջին տարին հայերու և թիւրքիոյ յոյներու նիւթական աղբեցութիւնը սպասածէն աւելի մեծ էր կառավարութեան գործերուն վրայ. այսօր այս վերջին պատերազմը զգալի հարուած մը եղաւ այդ աղբեցութեան, և եւրոպական, անգլիական, ֆրանսիական և գլխաւորաբար գերմանական, գրամագլուխներու հեղեղումը Կ. Պոլսոյ մէջ եղաւ ահագին: Եւրոպական այդ տէրութիւններն իրենց գաբիդալիստներու միջոցաւ այդ եղանակաւ այսօր իրենց ձեռքն են ձգած Կ. Պոլսոյ և կրնամ ըսել ամբողջ թիւրքիոյ դրամական գործերը: Ոճրագործն անտարակոյս օգուտ մը ունի իր քաղաքականութեան համար դրամական աղբեցութեան այդ տեղափոխման մէջ եւրոպացիներու ձեռքը, բայց այդ օգուտն ալ շատ կարճ ժամանակի մը համար է՝ ի նըպաստ թիւրքիոյ քանի մը քաղաքական ներքին ծանր խնդիրներուն և անոր քաղաքական արտաքին վիճակին համար: Հարկադրեալ՝ Համիտը այսօր պիտի հետեւի այդ ուղղութեան, բայց մօտ ապագային ալ աւելի ծակատաքական վիճակի մը մէջ իյնալու պայմանաւ: Որովհետեւ այլ ևս իր երկրի նիւթական ոյժը անիկա վերջնականապէս ծախած է եւրոպացիներուն որոնք ալ, անշուշտ, աղէկ չը պիտի քաղեն միմիայն իրենց նիւթական շահը, այլ այդ եւրոպացի գաբիդալիստներու այսօրուան այդ նիւթական գերիշխանութիւնը՝ նախերգանքն է եւրոպական տէրութիւններու վաղուան քաղաքական վերջնական գերիշխանութեան Կ. Պոլսոյ մէջ, ամբողջ թիւրքիային վրայ:

Այսօրուան նամակս ընդհանուր համառօտ տեսութիւն մըն է: Լուրերու կողմէ ամենէն աչքի իյնալիքն այն է, որ իրեն սուլթանին հրամանաւ ամեն մզկիթներուն մէջ քարոզներ կը կարդացուին ընդհանուր Խալափութեան բարոյական վերածնութեան մասին և շարունակ օտար պետութիւններու հպատակ միւսիւլմաններէն իսկ, ինչպէս Հնդկաստանէն, Ալժիրիարէն և այլն, փառաբանութեան ուղերձներ և խալափական եղբայրութեան քարոզներ կը հասնին այստեղ՝ մասմետական կրօնապետներուն: Խալափականութեան այս ընդհանուր շարժումը որոշ ապացոյց ըլլալով հանդերձ թէ որ ասիական երազներու է անձնատուր եղած Խալափ սուլթանին յաղթանակին համար, միւս կողմէ կապացուցանէ թէ որ աստիճան յուսահատութեան ենթակայ է Խալափ որ փոքրիկ յաղթութիւն մը իսկ զերեւը կը նետէ ապուշ զառանցանքներու և ցնորքներու մէջ: Խալափի սպառնալիքներն ալ արդէն ծիծաղ կը շարժեն... Սակայն, կը յաւելում, իսլամի այժմեան այդ հեղեղային երևոյթը և գոռոզութիւնը մենք կը պարտինք մեծ կոչուած տէրութիւններուն:

Տեղիս Երեսները անյուսալի կերպով թուլամորթ հանդիսացան և այսօր անոնց սարսափը աւելի մեծ է, քան հայերու սարսափը ջարդերու ամենասովորի ատենները:

Լուրեր կը պտտէին թէ դեսպանները բանակցութիւններու միջոցին, ժողովներու մէջ շատ կը ծիծաղին եղբր թէ վիճիկ փաշային և առհասարակ սուլթանի բռնորդ ներկայացուցիչներուն ամեն տեսակի տգիտութեան, անկրթութեան և կատարեալ անհասկացողութեան մասին դիւանագիտական գործերու և խնդիրներու մէջ: Թերևս, սակայն այդ ծիծաղը չարդիւր որ նոյն սուլթան և իր թէ վիճիկ փաշաներ իրենց տգիտութեամբ հանդերձ անընդհատ թմբուկներ չալեն եւրոպական իմաստուն դիւանագէտներու գլխուն:

ԱՍՏԱՌ.

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ԹԻՒՐԿԻԱ.

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ.

Բանակցութեան պայմանների մէջ Բ. Դուռը նախապէս յարուցեց զանազան դժուարութիւններ: Սուլթանը հրամայեց թէ վիճիկ փաշային հաղորդել եւրոպական պետութիւնների դեսպաններին, թէ սահմանագծի կանոնադրման վերաբերեալ իրենց առաջարկութիւնները բոլորովին անպատասխան են իր երկրի համար և հետեւաբար անկարելի է ընդունել. որպէս նաև նոյն իմաստի համեմատ մի իրատէ հրատարակելով ուղարկեց օտար երկիրների թրքական դեսպաններին:

Միաժամանակ թիւրք կառավարութիւնը կը շարունակէ ուժեղացնել իր բանակները Աբրասեան ծոցի հարաւային կողմերը:

Թէսալիայի մէջ կանոնաւորապէս կը հաւաքուեն ոչխարի տուրքը, որպէս նաև տասանորդը: Թէսալիան գրաւելու համար ամեն տեսակ ջանքեր ի գործ կը դրուեն սուլթանի կառավարութեան կողմէ: Հրատարակուած մի իրատէի համաձայն յայտարարուած է Վ. Պօլսի Զուռական Պատրիարքութեան՝ իր կողմէ անմիջապէս նշանակել Լարիսայի համար մի արքեպիսկոպոս հասկացնելով թէ՛ Թէսալիան արդէն Օսմանեան կայսրութեան մի մասը կը կազմէ այժմ: Թէսալիայի մէջ բնակուած մահմետականներին թելադրած է բազմաթիւ ստորագրութիւններով հանրագրեր պատրաստել՝ խնդրելով օսմանեան կառավարութեան վերահաստատութիւնն այդ նահանգի մէջ. Զուռաստան ապաստանած Թէսալիացի յոյներին հրաւեր է կարդացած ընդունել թրքական հպատակութիւն և վերագառնալ իրենց երկիրը՝ Թէսալիա, ուր պէտք է վայելեն հանգստութիւն և ապահովութիւն թէ կեանքի և թէ գոյքի՝ սուլթանի «բարեխնամ կառավարութեան արդարադատ օրէնքների» շնորհով:

Թրքական բանակները հետզհետէ կը կեդրոնանան Դոսոկոյի, Վերեստինայի և շրջակայ կարևոր վայրերը, և ուր կը շինուեն ամրոցներ ու ամրութիւններ:

Թրքական կառավարութեան ունեցած սոյն ընթացքը Գերմանական, Ռուսական և Աւստրիական կառավարութիւններին դժգոհութիւն է պատճառած: Սոյն երկրներէ հասած հեռագրերը կը յայտնեն, թէ, եթէ թիւրք կառավարութիւնը շարունակէ իր այս ընթացքը բանակցութիւնների խնդրի մէջ, Եւր. Պետութիւնները պիտի հարկադրուեն բռնի միջոցների դիմել ընդհանուր խաղաղութիւնը պահպանելու համար:

Իէտէրի Վ. Պօլսի թղթակիցը կը հաղորդէ, թէ Ռուս կառավարութիւնը մի շրջաբերական է ուղարկած պետութիւններին՝ այն իմաստով, որ հարկաւոր է ա-

ճապարել վերջ տալու Զուռա-Թրքական բանակցութիւնները՝ ապահովելով ընդհանուր խաղաղութիւնը:

Բանակցութեան երկարաձգումն ու անստոյգ վիճակը Զոյն կառավարութեան ենթարկած է ամենալուրդ դրութեան: Ֆինանսական կացութիւնը բոլորովին խանգարուած է և գանձատան աղբիւրներն սպառուած: Ցուրբերի եկամուտը նուազած է 30 կամ 40 առ հարիւր, միջին թւէն ալ շատ պակաս: Օտար երկրների մէջ ի նպաստ Զուռաստանի հանգանակուած գումարներն արդէն աւարտած են: Մինչդեռ, հակառակ այս ամենի, կառավարութիւնը ստիպուած է պահպանել մօտաւորապէս, 60,000 հոգիէ բաղկացած մի բանակ, որը անհրաժեշտ կարիք ունի մեծամեծ ծախսերի. բացի այս արդէն Վրէտէի և Թէսալիայի զանազան կողմերէն եկած մօտ երկու հարիւր հազար փախստականներ ևս այսօր ծանրացած են Զուռաստանի վրայ: Սոյն փախստականները՝ ցրուած Աթէնքի մէջ և շրջակայ գաւառները՝ կը գտնուին ծայրահեղ թշուառութեան մէջ, որոնց դրութիւնը Զուռաստանի համար ֆինանսական ամենամեծ մի տագնապ կարող է համարուիլ:

Եւրոպական պետութիւնների Վ. Պօլսի Ներկայացուցիչները միասին մի ծանուցագիր են տուած Բ. Դուռն հետեւեալ իմաստով: Պետութիւնները որ գրած են Սահմանագծի կանոնադրման Ծրագիրը այնպէս, ինչ եղանակով գծած էր Ջինեորական attaché և Բ. Դուռն մատուցուած, իրենք ևս համաձայնած լինելով՝ հաստատապէս որոշած են վերջ դնել խոչնդոտներին, որը բացարձակապէս անհրաժեշտ է եւրոպական խաղաղութեան պահպանման համար:

Պատասխանների նոյն նօտան ստանալով՝ սուլթանը հեռագրեց Պետութիւնների գլխաւորներին և նախագահ Պ. Ֆօրին, որով դարձեալ առաւելութիւն և մի նոր խնդիր կը դնէր Պէնիօսի սահմանագծի նկատմամբ: Եւր. Պետութիւնները ուղարկեցին ժխտական պատասխան և միանգամայն խորհուրդ կը տային սուլթանին անյապաղ ընդունել իրենց Պատասխանների կողմէ առաջարկուած պայմանները: Գերմանիոյ կայսրը ցաւ ի սիրտ յայտնել էր սուլթանին՝ առաջարկը ընդունելու համար իր անկարողութիւնը և, ընդհանրապէս, համաձայնութիւնը միւս Պետութիւնների տեսութիւնների հետ: Ցարի պատասխանի մէջ կային շատ խիստ կէտեր, ուր նշանակուած էին այն բոլոր տագնապներն ու անախորժ հետեւողները, որոնց ենթարկուելու է Թիւրքիան, եթէ շարունակէ ընդգիմանալ Պետութիւնների ցանկութիւններին:

Եպիփօսի, Պրէվէզայի և Պէնտիպիկատիայի թէ քրիստոնեայ և թէ մահմետական ազգաբնակչութիւնները ծայրայեղ նեղութեան և թշուառութեան մէջ կը գտնուին: Մահմետականները բարի գալուստ են մաղթած յունական բանակին, որի համար այժմ ամբաստանուած են թրքական կառավարութեան կողմէ:

Վօլոյի կառավարիչ Անվէր փաշա մի յայտարարութիւն է հանած, որով կը յայտարարէ վիճակային ժողովներ անել, ինչպէս գոյութիւն ունէր առաջագոյն թրքական իշխանութեան ժամանակ:

Վ. Պօլսի մէջ խուզարկութիւնների թիւը հետզհետէ կը բազմանայ: Վերջերս բազմաթիւ թիւրքեր ձերբակալուած են, որոնց մէջ կը գտնուին ապաներ, քաղաքական պաշտօնեաներ, և ի միջի այլոց, մի շէյխ:

Վը հաւաստեն, թէ Թիւրքիոյ և Ռուսմանիոյ մէջ մի դաշնակցութիւն կնքուած է՝ զինւորական օգնու-

Թեան տեսակետով Թիւրքիային ապահովելու համար, այնպիսի դէպքին, երբ Պուլկարիան թշնամական ընթացք կըստանայ և պատերազմի նշաններ ցոյց կը տայ Թիւրքիոյ դէմ:

Յոյն կառավարութիւնը պետութեանց ներկայացուցիչներին մի տեղեկագիր մատուցած է, յայտնելով Թիւրք զինուորների և Ալբանացի բաշիբոզուկների էպիրոսի մէջ կատարած գաղանձութիւնների մասին, ինչպէս նրանց գիւղերը այրել, եկեղեցիները պղծել, կանանց բռնաբարել և անեկարագրելի նեղութիւններ կը տան քրիստոնեաներին:

Սուլթանը ճշմատ-փաշան Վրէտէ ուղարկած է:

Վրէտէի ապստամբներն յայտարարած են Ատմիրալներին թէ քանի որ ճշմատ փաշան և Թրքական զօրքերը կը մնան Վրէտէի մէջ, իրենք հաւատք չեն կարող ունենալ տրւած ինքնորինութեան վրայ, և կը վերանորոգեն կռիւները: Ատմիրալները անոնց հանգստացուցած են ասելով թէ Վրէտէին տրուած է ինքնորինութիւն և նա պիտի ունենայ իրեն յատուկ դրօշակը:

ՓՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ.

Փրանսիական «La nouvelle revue» ամսուկ յայտնի ամսագրի Մայիս 1-ի համարում կարդում ենք ժամ Պոնիքար ստորագրութեամբ մէկ ընդարձակ ու բարեխիղճ գրութիւն «Հայերը, Կրէտացիները եւ Եւրոպայում» վերնագրով: Հեղինակը փաստերի հիման վրայ մեղադրում է Եւրոպական տէրութիւններին սրանց բռնած Թիւրքապաշտպան քաղաքականութեան համար, մեծ համակրութեամբ խօսում է Հայերի, Կրէտացիների եւ Յոյների մասին: Կարգ տանելով Զէյթունի 1895 թիւ ապստամբութեան վրայ, հեղինակն ասում է,—

«Զք մտաւանք, որ Զէյթունում, ուր հայերը կարող եղան, մէկ ամենախիստ դիմադրութիւն ունեցան Թիւրքերի դէմ: Նըրանց դիմադրութիւնն այնքան սոսկալի էր, որ Թիւրքերը ըստիպուեցան նահանջել: Մենք այդ գիտենք Պ. Պ. Կամբոնի (Ֆըրանսիակ. դեսպան Վ. Պոլսում), մի հեռագրից, 3 յունւարից 1896 թ., որ գտնուում է «Դեղին Գրքի» մէջ. — «Բ. Դուռն այսօր խնդրի է դեսպանների միջամտութիւնն ու օգնութիւնը դադարեցնել տալու հասար Զէյթունի դիմադրութիւնը... Այդ դիմումը մեծ տէրութիւններին բացատրուում է հաւանականաբար հաստատուելով, թէ օսմանեան զօրքերն այնտեղ պարտութիւն են կրել»:

«Արդարեւ, շարունակում է հեղինակը, Բ. Դուռն գործերը շատ վատ էին գտնում: Դա ճիշտ չէր այն ժամանակներն էր, երբ ապստամբների պարագլուխ երիտասարդ Հրաչեան, պատերազմական սովորութեան համեմատ, տեսնում էր, ինչպէս իր բարձրացրած թրի տակով էր անցնում Թիւրքական յաղթանած բանակը, մինչ այս վերջինի պարագլուխն էր մի գնդապետ՝ նոյն էթէմ փաշան, որն այսօր ընդհանուր հրամանատար է Թիւրքական զօրքերի թէսալիայում»:

«Եւրոպան թող չէր փակած ունենայ իր աչքը, — եզրակացնում է իր միտքը հեղինակը, — եւ թոյլ տայ խեղդամահ անել Հայերին, քայքայ Զգացման աղաղակն աւելի ու աւելի քարծր է ելնում: Զգացումն էր, որ դիմադրութիւն գործն. այդ զգացումն էլ վաղը կը ստեղծէ մի Հայաստան. դա իրենի շարունակ ածող ոյժի մէջն է, դա պատմութեան իսկ օրէնքն է. կամայ ակամայ վաղը կը տեսնենք մէկ ինքնավար Հայաստան, գուցէ աւելի վերջ՝ մի Հայական թագաւորութիւն»:

Վոլսակցութեանս Գանձարանում շնորհակալութեամբ ստացել են հետեւեալ գումարները. —

ԱՄԵՐԻԿԱ. — Ուստըր քաղաքի Հնչակեան Մասնաճիւղը հանգանակած է 103 և կէս դոլար հետեւեալ անձերից:

Պրոֆ 20 դոլ. 5 սենթ, Ճէլլադ, Հրապարակախօս և Մուրատ 10-ական դոլ. Պղտիկ աղբար 7 դոլ. 50 ս. Գ. Արարատեան 7 դ. Երկայն, Բաբէէն, Ապու-Ճէլ և Հատախօս 5-ական դ. Լեռնեցը պաշտող 3 դ.

Խենթը պաշտող 3 դ. 50 ս. Փոթորիկ, Կայծակ և Քարգէզ 3-ական դ. Գանձապետ 2 դ. Ա. Գ. 1 դ. 75 ս. Հայաստանցի մը 1 դ.

Նիւ Եօրկի Հնչակեան Մասնաճիւղի ձեռքով հանգանակւած է 35 դոլար հետեւեալ անձերից. Թ. Բ. 10 դոլ., Թ. Քալարճեան 5 դ., Պ. Գ. 5 դ., 25 սն., Թօրոզ և Կայծակ 3-ական դ., Հսկայ և Ա. Կ. Երուանդ 2-ական դ., Յ. Թորոսեան, Ա. Կամաուր և Հայր Աբրահամ 1-ական դ., Արտիկ և Յ. Բագրատունի 50-ական սն., Մ. Շահէն, Արշակ և Ոմի 25-ական սն:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ, — Ստացված է Արարատահայնի Հնչակեան Մասնաճիւղից Լ. — Ի հաշւեցուցակը, որով այնտեղ քանձված գրամի գումարն է 1) 14,681 դռան, 40 կոպէկ (1668 թուման, 1 դռան, 40 կոպէկ) 2) Կասպեան «Աշխոյժ» խմբի ցուցակով՝ 60 բուբի 70 կոպէկ. 3) Սալմաստի ցուցակով՝ 4,044 դռան 85 կոպէկ, 4) Արդ. Բ. ում հանգանակված՝ Գ. Շ. 100 դռ., Յ. Է. 100 դռ., Օր. Սաթենիկ 20 դռ., Ա. Էլզ. 30 դռ., Ս. Եդ. 100 դռ., Օր. Նեկտար 25 դռ., Գր. Մ. Պ. 40 դռ., Ոմի 50 դռ. Մ. Պոզ. 20 դռ., Ս. Տ. Յ. 50 դռ., Կ. Տ. Յակ. 50 դռ., Գ. Էլ. 10 դռ., Ա. Սահ. 20 դռ., Ալ. Ալ. 20 դռ., Ոմի 20 դռ., Մ. Յար. (Սէրգո) 30 դռ., Դան. Խաչ. 30 դռ., Ընկ. ՍԼ՝ 40 դռ., Տ. Մ. Ա. 40 դռ., Հաւարշ Արամեան 40 դռ., Գ. Համբ. 5 դռ., Թ. Սահ. 10 դռ., Ոմի 10 դռ., Յ. Ապրիսեան 80 դռ., Յ. Խաչիկեան 20 դռ. և Մինաս 20 դռ.:

ԹԻԻԲԻԱ. — Զ. Բ. Ի Փոքր խմբից 41 ֆրանկ. նաև Վառօգի ձեռքով հանգանակւած 9 ֆրանկ.

Թ. Կպ. — Ից Մ. — Ի ձեռքով Աւսո Արշակեան խմբից 10 ֆր., Ա. Գ. 1 ֆր., Կ. Տ. 4 ֆր.:

ՃԻՊՈՒՏԻՒՅ Յ. Թ. 50 ֆրանկ.

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ժ Ր Ե Գ Ի Ր

ՀՆԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՆԵԼԻԱԾ՝ ԲԱՅԱՐԱԿԱՆ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ.

ԳԻՆԸ 1 ՖՐԱՆԿ.

«ԱՊՏԱԿ»

ԵՐԳԻՅԱԲԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ (ՄԵԱՄՍԵԱՅ)

Լոյս տեսաւ «Ապտակի» Զորքող տարեշրջանի № 2-3 Յունիսի եւ Յուլիսի համարները: Նկարը — (առանձին թղթի վրայ) Յայգեք. — Եղանակը «La Belle Hellène»-ից ոտանաւորով:

«Ապտակ»-ի այդ համարի բովանդակութիւնն է. —

Ամօթ. — Աւարը (ոտանաւոր). — Դէս ու Դէն. — Սուտ պատգամաւոր-կեղծ ներկայացուցիչ. — Առակ. — Զանգակներ. — Իմ փոքրիկ ծանապարհորդութիւնս. — Նորատեսակ հանելուկներ. — Զէզիտի քաղաքականութիւնն եւ կամ Զէզիտի կեանքի համար կրթիչ քաղաքան Նորագոյն մեթօտով. — Ուրիշների մտքեր. — Քաղաքի յիշատակ՝ Թիւրք պաշտօնական թերթից:

«Ապտակի» տարեկան բաժանորդագինն է 5 ֆրանկ:

Յօգուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ՝ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London W. [Angleterre].

ՏՊԱՐԱՆ

«Հնչակ»-ի

10-րդ Թ.Ն.